Անկախ աուդիտորական եզրակացություն

Ջերմուկի համայնքապետարանի ղեկավարին և ավագանու անդամներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ «Համայնք») 2023թ. բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ գործառնական դասակարգմամբ, Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, Համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը և Համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը:

Մեր կարծիքով կից հաշվետվությունները ճշմարիտ են ներկայացնում 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ջերմուկ համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ գործառնական դասակարգմամբ, բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ին ընդունված թիվ 254-Ն հրամանի պահանջների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են «Աուդիտորի պարտականությունները բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ» հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի» (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Համայնքի նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագրքի:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

A Member of Crowe Global | A global network of independent accounting firms
Քրոու Գլոբալի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ